15486

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«13» 12 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0187-22

Ձեռնարկողը՝ ***«Արծաթե Սյուն» ՍՊԸ***
ք. Երևան, Ռիգայի 126/4 , բն. 49

Գործունեությունը՝ ***Գոգհովիտի դոլերիտային բազալտի հանքավայրի հյուսիսային տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ՀՀ, Շիրակի մարզ,

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ № 0187-22

< 13 > 12 2022թ.

Շիրակի մարզի Գոգհովիտի դոլերիտային բազալտի հանքավայրի հյուսիսային տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Արծաթե Սյուն» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ, Գոգհովիտ, Ցողամարգ բնակավայրեր

Ներածական մաս. «Արծաթե Սյուն» ՍՊ ընկերությունը նախաձեռնում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Գոգհովիտ և Ցողամարգ բնակավայրերի վարչական տարածքում: Գոգովիտ բնակավայրի բնակելի մոտակա տարածքներից 0.98կմ, Թորոսգյուղի բնակելի տարածքներից՝ 1.8կմ և Ցողամարգ բնակավայրի մոտակա բնակելի տարածքներից՝ 1.3կմ հեռավորությունների վրա:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող հողերը ներկայացված են համայնքային, քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող և գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերով:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա) ենթակետի:

Նկարագրական մաս. Երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականացվեն հորատանցքերի և բացահանքի անցմամբ, առկա մերկացումների միջոցով՝ կատարելով համապատասխան փաստագրման և նմուշարկման աշխատանքներ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է կատարել ապարների հետախուզում և տալ Գոգհովիտի դոլերիտային բազալտների հանքավայրի հյուսիսային տեղամասի երևակման բազալտների որակական և քանակական գնահատականը դրանք որպես երեսապատման նյութ (ըստ 9479-98 ԳՈՍՏ-ի) շինարարական խճի ու ավազի (ըստ ՀՍՏ

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

ԳՕՍ 8267-95 և ՀՍ ԳՕՍ 8736-2014) հումք գնահատելու, պաշարների հաշվարկման և հանքավայրի հետագա շահագործման համար:

«Блоки из горных пород для производства облицовочных, архитектурно-строительных, мемориальных и других изделии» տեխնիկական պահանջներին համապատասխան:

Ուսումնասիրվող տեղամասի ծայրակետերի կոորդինատները ARM WGS-84 համակարգով, բերվում են ստորև:

1	4534339.0	8401717.4
2	4534596.5	8401671.6
3	4534675.5	8402064.4
4	4534507.1	8402525.6
5	4534390.8	8402942.2
6	4534296.1	8402933.6
7	4534233.4	8402576.1
8	4534219.4	8402420.2
9	4534295.0	8402420.2
10	4534387.0	8402424.2
11	4534423.0	8402260.2
12	4534429.0	8401960.2

Հայցվող տարածքի մակերեսը կազմում է 26.915հա:

Ուսումնասիրվող տարածքում նախատեսվում են 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ և երկրաբանական քարտեզի կազմում, երկրաբանահանութային աշխատանքներ, հորատանցքերի մեխանիկական, սյունակային հորատում, նմուշարկում, փորձնական հանույթ ռադիոմետրական և ինժեներահիդրոերկրաբանական ուսումնասիրություններ:

Գոգհովիտի դոլերիտային բազալտների հանքավայրի հյուսիսային տեղամասի երևակման ապարների հզորությունը կազմում է մոտավորապես 10մ:

Հորատման աշխատանքներն իրականացվելու են սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 112-96մմ տրամագծով: Նախատեսվում է հորատել 10.0 մետր խորության 7 հորատանցքեր 94.0մ^3 ընդհանուր ծավալով, հորատահանուկի նվազագույն ելքը՝ 85%:

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման համար նախատեսվում է երևակման սահմաններում փորձնական բացահանքի անցում 250մ^3 ծավալով, որից մոտ 100.0մ^3 դելյուվիալ առաջացումներից ու հողմնահարված ապարներից (այդ թվում՝ հողաբոսական շերտ 12.5մ^3 (20.0 x 0.25 x 2.5 = 10.5մ^3) և հողմնահարված ու ճեղքավորված բազալտներ 87.5մ^3) և 150.0մ3 չհողմահարված, թարմ ապարներից: Վերջիններից կկատարվի փորձնական հանույթ պիտանի բլոկների ելքի որոշման համար: Փորձնական հանույթի բացահանքի ընդհանուր ծավալը կկազմի 250.0մ^3 լեռնային զանգված:

Նախատեսվում է 1-ին խմբի 7 հորատանցքերի հորատում ՈՒԿԲ 50 տիպի ինքնագնաց հաստոցով: Մանրամասն փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը, բացահանքը և մերկացումները:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալներն են

-հորատահանուկի փաստագրում-94.0մ

-փորձնական բացահանքի և մերկացումների փաստագրում 90.0մ:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, մերկացումներից և բացահանքից:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- հորատանցքերից առաջինը նմուշարկել անընդհատ տիրույթներով, մնացածը ընդհատվող: Հորատահանուկի նմուշների սեկցիայի երկարությունը մինչև 5մ է:
- հանուկային նմուշների ընդհանուր քանակը կկազմի 16 նմուշ:
- մենաքարերի վերցնում փորձնական բացահանքից 2 հատ:
- մենաքարերի վերցնում մերկացումներից 7 հատ:

Քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 2 նմուշ, իսկ քարաբանական կազմի ուսումնասիրման նպատակով կվերցվի 2 նմուշ: Կնմուշարկվի նաև 1 համախառը նմուշ բազալտներից ավազի և խճի ստացման լաբորատոր ուսումնասիրության համար:

Դոլերիտային բազալտների քիմիական կազմը կորոշվի ըստ 2 նմուշների անալիզի, ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 25 նմուշներով (հորատահանուկ 16 նմուշ, մենակաքար 9 նմուշ): Նմուշներից 16-ը կենթարկվեն փորձարկումների լրիվ ծրագրով, իսկ 9-ը կրճատ: Քարաբանական և միներալոգական ուսումնասիրությունները կկատարվեն 2 հղկուկների միջոցով:

Լաբորատոր հետազոտման կենթարկվի մեկ համախառն նմուշ խճի ուսումնասիրման համար: Լաբորատոր ուսումնասիրությունները և նմուշների ֆիզիկամեխանիկական փորձարկումները նախատեսվում է կատարել համապատասխան մասնագիտացված լաբորատորիայում:

Նախագծով ճանապարհների և հորատման հարթակների շինարարություն չի նախատեսվում օգտագործվելու են գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները, անհրաժեշտության դեպքում կատարվելու է դրանց բարեկարգում:

Մակերևութային ջրերը ճեղքերով անցնում են բազալտի հաստվածքով և ներթափանցելով ստորադիր ապարների մեջ բեռնաթափվում են Ջրաձոր գետակի հովտում:

Աշխատակիցների խմելու և կենցաղային կարիքների համար անհրաժեշտ ջուրը գտնվելու է Գոգհովիտ բնակավայրից, ավտոցիստեռնով տեղափոխվելու է տեղամասի տարածք:

Կենցաղային կեղտաջրերը նախատեսվում է կուտակել նախապես կառուցված անթափանց հորի մեջ, հետագա դատարկումը կազմակերպել մասնագիտացված ընկերության կողմից:

Փորձնական բացահանքի 50մ^2 տարածքից միջինը 0.4մ հզորությամբ հողերի բերրի շերտը հեռացվելու է, կուտակվելու է բացահանքի հարակից մասում:

Կատարվելու է խախտված տարածքների ռեկուլտիվացիա երկու փուլով: Նախ հետ կլցվեն, կփռվեն և կհարթեցվեն մոտ 80մ^3 ծավալով ջարդոտված, փուշտա շերտի բազալտները, այնուհետև կփռվի 20մ^3 ծավալով հողաբուսական շերտը: Այնուհետև կկատարվի պարարտացում հնեցված գոմաղբով և կցրվեն ցորնուկային ֆորմացիայի բազմամյա բույսերի սերմեր:

Հայցվող տարածքում հանդիպում են ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված «Գազ չորասեր» (Astragalus xerophylus) բուսատեսակը, ինչպես նաև ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված՝ «Տափաստանային արծիվ» (Aquila nipelansis orientalis) թռչնատեսակը:

Մշտադիտարկումների իրականացման նպատակով տարեկան կտրվածքով նախատեսվում է մասնահանել մոտ 410.0հազ.դրամ:

Խախտված տարածքների ռեկուլտիվացիա, որը կկատարվի երկու փուլով: Նախ հետ կլցվեն, կփռվեն և կհարթեցվեն մոտ 80մ^3 ծավալով ջարդոտված, փուշտա շերտի բազալտները, այնուհետև կփռվի 20մ^3 ծավալով հողաբուսական շերտը: Այնուհետև կկատարվի կենսաբանական ռեկուլտիվացիա:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար ձեռնարկության կողմից նախատեսվում է 75 000 (յոթանասունհինգ հազար) դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Լեռնային տեխնիկայի շարժիչների վառոցքները պետք է լինեն կարգավորված, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը:

-Արտանետվող նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում ավտոինքնաթափի և բուլդոզերի շարժիչների վրա:

- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակին:

- Աշխատանքների ավարտից հետո ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացում:

- Մթնոլորտային օդում փոշու և աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգի իրականացում:

-Չտեսակավորված կենցաղային աղբը տեղափոխվում է աղբավայր փակ կողեր ունեցող ինքնաթափով, սպասարկման պայմանագրի կնքում ծառայություն մատուցող կազմակերպության հետ:

-Կենցաղային կեղտաջրերի հավաքում անթափանց հորի մեջ, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով:

-Երևակման տարածքում ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման դեպքում ձեռնարկել միջոցառումներ դրանց պահպանության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, համաձայնեցնելով դրանք պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդի աղտոտման վերահսկման, պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:

-Հողային ծածկույթի, ամսեկան մեկ անգամ:

-Վայրի բնության, կենսամիջավայրի, կարմիր գրքում ընդգրկված էնդեմիկ տեսակների, աղմուկի մակարդակի՝ տարեկան մեկ անգամ:

Պատճառաբանական մաս. Շիրակի մարզի Գոգհովիտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային

քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Շիրակի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
-Անհրաժեշտ է գործունեության հողօգտագործումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
-Տարածքում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով ընկերությունը պարտավորվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝
- Առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով:
- Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների

կենսունակության խաթարմանը:
- Միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխել բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք, կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրել համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:
– Բուսածածկի և կենդանական աշխարհի պարբերական մոնիթորինգ:
-Երևակման տարածքում ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման դեպքում ձեռնարկել միջոցառումներ դրանց պահպանության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, համաձայնեցնելով դրանք պետական կառավարման լիազոր մարմնի հետ:
– Երևակման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների հայտնաբերման դեպքում, ընկերությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար, բացառելով տեսակների թվաքանակի կրճատումը և դրանց ապրելավայրերի վատթարացումը: Միջոցառումները պետք է համաձայնեցվեն պետական կառավարման լիազոր մարմնի հետ;
– Երկրաբանական քարտեզագրման, երթուղիների կատարման ժամանակ տարածքի դիտարկում բների հայտնաբերման նպատակով: Առկայության դեպքում, դրանց կամ դրանցում հայտնաբերված կենդանիների, թռչունների տեղափոխում աշխատանքների տարածքից դուրս:
– Երթուղիների ընթացքում երկրաբանի կողմից ձեռնափայտով, կամ երկրաբանական մուրճով կատարվելու են հարվածներ տեղամասի մակերևույթին, ինչը ստեղծելու է հարվածային ալիքներ և դառնալու է անհանգստության և տարածքը լքելու պատճառ սողունների համար: Այս միջոցառումը թույլ կտա բացառել մարդ-կենդանի հանդիպումից :

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արծաթե Սյուն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Շիրակի մարզի Գոգհովիտի դոլերիտային բազալտի հանքավայրի հյուսիսային տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան